МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **11.12.2023թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1

(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար Դիլիջանի հանգստյան գոտու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2023 թվականի սեպտեմբերի 27-ին տեղեկագրում հրապարակվել է «ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթակարգ):

Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով մասնակցության հայտ է ներկայացվել նաև «Կապավոր» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 90003442, այսուհետ՝ Ընկերություն) կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի նոյեմբերի 3-ի արձանագրության 7.2 կետով Ընկերության կողմից ներկայացված հայտի փաթեթում արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ ներառված «հավելված 1.1»-ով անհրաժեշտ է եղել ներկայացնել սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրեր, սակայն մասնակցի կողմից ներկայացվել են կայքէջի հղումներ:

Հանձնաժողովի նույն նիստի արձանագրության 8.1 կետով գնման ընթացակարգը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ և 42-րդ կետերին համաձայն կասեցվել է, իսկ Ընկերությանը ներկայացվել են հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումներ:

Հանձնաժողովի հաջորդ՝ 2023 թվականի նոյեմբերի 8-ի նիստի արձանագրության 9.2 կետով ամրագրվել է, որ Ընկերությանը հատկացված մեկ աշխատանքային օրում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել, նույն արձանագրության 9.2.1 կետով՝ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 42-րդ կետի համաձայն Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, իսկ 11.1 կետով՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը և նույն հոդվածի 2-րդ մասը որոշել է Ընկերության տվյալները ներկայացնել լիազոր մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՈՐՈՇԵՑ

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրը այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակիցներին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐՈՎ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ